ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԹԱԲԱԹԱԹԵՐԹ

ԳԼԽԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԻՒՈՒՄ ԵՆ ՀԱՄԵՆ ԼԵԶՒՈՎ.

Առաջին երեսում տողը (petite) 6 շահի
Վերջին ,, ,, ,, 3 շահի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Է

Թաւրիզում ամիսը 1,50
Գաւառներում ,, 2 դր.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆ ԱՐԺԷ
8 ՇԱՀԻ

Հասցէն՝ Redaction „Archalousse“ Tauris (Perse) | ادارهٔ روزنامهٔ «آرشالوس» تبریز

Խմբագրութեան հետ գործ ունեցողները դիմեն Հայկ Խաչանեանին բիւրոյում

Բ. ՏԱՐԻ | № 3 ՀԻՆԳՇԱԲԹԻ 7՝ ՓԵՏՐՒԱՐ 1919 Թ. | Բ. ՏԱՐԻ

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թաւրիզի Հ. Յ. Դ. պատանեկական միութեան օրգան

„ԱՐՇԱԼՈՅՍ“

շաբաթաթերթի

Թաւրիզում ամսական բաժանորդագին է 1,50
Գաւառներում ,, ,, 2 դրան։

Բաժանորդագրուել ցանկացողները դիմեն Աշոտ Մ. Բաղդասարեանին

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տասնեակ տարիներ շարունակ հայ ժողովուրդը տանջուել, շարչարուել ու հիւծուել է ելզգեան մենաւորի խաւարակուռ մագիլներում.,. և դարեր շարունակ մայր Հայաստանի արիւնակարդ պատանդանի վրայ խունկը ծխել է և հարիւր հազարաւոր որբուկների, ցաւատանջ մայրերի ու անարգուած քոյրերի հեծկլտանքները անմեղ մանուկների ողջակէզների արեան գոլորշիների հետ, որպէս մի թանձրացեալ, մի մարմնացեալ բողոք տանջուած ժողովրդի ու հիւծուող ազգի-երկինք է սլացել, տանելով այնտեղ մի մարտիրոսուող ազգի արդար բողոքը, որպէս կենդանի վկայ մորթեցերծ ազգի...

Մռայլ ու դժգոյն դարերի ընթացքում հայ ազգը—արեւելքի ջահակիրը—այդ կուլտուր-տրեգերը, արցունքներով ցօղուած իր յուսալի աչքերն ուղղել է դէպի կուլտուրայի որբանը, դէպի Եւրոպան, և քանի քանի անգամ հայկական այդ արիւնոտ հարցը բազմաթիւ գլուխներ է զբաղեցրել, մտքեր է յուզել, փոթորկել...

Սակայն աւաղ· Եւրոպան բաւականացաւ միայն յօղուածներ խմբագրելով ու սրբագրելով...

Առանց զոհերի ու արիւնների չէր ազատութիւն։

Ահա վճիռը միջազգային յայտնի կոնֆերանսի, ահա և խօսքը տիեզերական ազգերի ազատագրման պատմութեան։

Բայց տարտամ դրութիւններն, այդ սպիտակ սպառնալիքներն ինչ արժէք կարող են ունենալ ելզգեան մենաւորի ու նրա արբանեակների արիւնոտ սխրագործութիւնների առջև։

Դա վերջին յոյսն էր Հայաստանի, այնուհետև նա փաստօրէն արդէն զգաց, որ Եւրոպան անկարող է լուծելու իր ճակատագիրը... ճակատագրի որոշումը հէնց իրեն էր վերապահուած, և իրօք համաշխարհային այս փոթորկում նա հաւաքեց իր ուժերն ու ասպարէզ նետուելով կռեց, կոփեց իր ճակատագիրը։

Վերջապէս իր զաւակների արեան գնով նա գնեց իր ազատութիւնը, և այս չնաշխարհիկ օրում հիմնեց իր գեղեցիկ հանրապետութիւնը։

Հայկական հարցն այս անգամ դարձեալ դիպլոմատիայի բազմաունքի առարկան պիտի դառնայ և կարծում ու հաւատի ենք, որ այս անգամ արդէն չեն վրիպի այնքան զոհերն ու արիւնները և Հայաստանը վերջնականապէս կստանայ իր արժանի գրնահատութիւնը։

Սպասենք և յուսանք։

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ահա մի քանի տարի է, ինչ մեզ մօտ՝ Թաւրիզում կազմուել է կուլտուրական միութիւնը, որն այս ամբողջ ժամանակուայ ընթացքում իր ուժերը ներածին չափ նպաստեց հասարակութեան մի որոշ մասի ինքնազարգացմանը (իսկ մնացած մեծամասնութիւնը միշտ անտարբեր է դէպի այդպիսի հիմնարկութիւնները)։

Վաղուց էր ինչ միակ «Աբովեան-Արամեան» գրադարան-ընթերցարանը փակուել էր անյայտ պատճառով· այն միակ հիմնարկութիւնը, որ տարիներ շարունակ որոշ դեր էր կատարել մեր ինքնազարգացման գործում, փակուում է իրենից «անկախ» պատճառներով և անուշադրութեան մատնուում։ Վերջին տարիներս թեմական դպրոցի հոգաբարձութիւնը մտադրում է վերստին բաց անել այդ գրադարանը, բայց դա էլ 14 թուի գաղթի պատճառով մնում է անիրագործելի, մինչև վերջին տարիներս, երբ կազմուում է կուլտուրական միութիւնը, որն առաջին հերթին պարտականութիւն է յանձնում կանոնաւորելու գրադարանը և հասարակութեան տրամադրութեան տակ դնելու. բայց երբ յանձնուում է, արդէն քայքայուած էր, որովհետև ամեն մի բարեխիղճ գրադարանապետ և բաժանորդ իր բարոյական պարտականութիւնն էր համարել իւրացնել ընտիր գրքերը։ Նորակազմ ընկերութիւնը տեսնելով, որ այդպիսի դրութեան մէջ չի կարող գործ սկսել, մանաւանդ, որ նոր հրատարակութիւններ գրեթէ չկային, դիմում է մի քանի անձանց նպաստելու նիւթապէս և շնորհիւ պ. Կ. Աբեանի ջանքերի հաւաքում է մի գումար, մօտ 2000 ռուբլի, որի մի մասն անմիջապէս փոխադրում է Կովկաս նոր գրքեր գնելու, որոնցից մի մասն ստացուում է, իսկ միւս մասը հնարաւորութիւն չի լինում ստանալու ճանապարհների փակուելու պատճառով։ Ուրիշ ոչ մի տեղից հնարաւորութիւն չունենալով գրադարանը ճոխացնելու, ստիպուած են լինում առայժմ գոհանալ գրանով։

Դրա հետ զուգընթացաբար սկսում են հերթական դասախօսութիւններ մատչելի նիւթերի շուրջը, որոնք կարճ ժամանակում անհրաժեշտութիւն են դառնում։

Կուլտուրական միութեան շնորհիւ է, որ Թաւրիզում հիմք է դրուում մի այնպիսի հիմնարկութեան, որն անհրաժեշտ էր ֆիզիքական տեսակետից. դա սպարան էր, որը կարճ ժամանակում բաւական յաջողութիւն է ունենում։

Անցեալ 1918 թուին կուլտուրական միութիւնը շնորհիւ քաղաքական անպատշաճ պայմանների, ստիպուած է լինում կրճատել դասախօսութիւններն և բաւականալ միայն գրադարանով։ Բայց այժմ, երբ դրութիւնը փոխուել և խաղաղուել է, մեզ համար շատ զարմանալի է միութեան այժմեան լռութիւնն· երբ մանաւանդ աւելի մեծ կարիք կայ նրա դասախօսութիւններին· մեր հասարակութիւնն ամբողջ մի տարուայ լռութիւնից յետոյ, այժմ ուրախութեամբ կը յաճախի այդպիսի դասախօսութիւնների։

Միւս կողմից էլ արդէն լրացել է վարչութեան պաշտօնավարութեան ժամանակամիջոցն, ուրեմն պիտի հրաժարուի և ասպարէզ գան աւելի թարմ ուժեր, որոնք կարողանան բաւարարութիւն տալ մեր գրգռուած հարցասիրութեանը։

Հ. Զաւէն

Թաւրիզ

ԱՆԻՐԱՒԱՑԻ ԳՈՐԾ

Թեմ. դպրոցի մանկավարժական խորհուրդն իր յունվար 30-ի նիստի որոշմամբ արգիլեց նոյն դպրոցի հինգերորդ դասարանին ներկայ գտնուել նոյն ամսի 31-ի գիշեր կայանալիք «Եւգինէ»-ի ներկայացմանը, պատճառաբանելով որ դրաման իր մէջ բովանդակում է որոշ կետեր, որոնք վայել և մատչելի չեն հինգերորդեցիներին։

Թէ որքան արդար և իրաւացի է այդ որոշումն, այդ ցոյց է տալիս դրամայի այնքան պարզ,

այնքան մաքուր և բարոյակրթիչ բովանդակութիւնը։

Մեզ միանգամայն տարօրինակ թուաց այդ որոշումը. տարօրինակ, որովհետև դեռ երէկ էր, որ նոյն հինգերորդ դասարանի աշակերտուհիները, աւելի քան անվայել, դիմակի տակ, աւելի քան անաւյել դերում, մանկավարժական խորհրդի ձեռքով կազմակերպուած երեկոյթին բեմ էին հանուել հասարակութեան առաջ։

Դեռ երէկ էր, որ նոյն ուսուցիչների աչքի առաջ այս կամ այն պարոնի հետ նոյն դասարանի աշակերտուհիները վալսելով չափում էին «Հայկազեան Թամարեան» դպրոցի կորիդորը։

Եւ եթէ այդ բոլորը վալսել և թոլլատրելի են մի հինգերորդցու, ապա ուրեմն «Եւգինէն» աւելի քան վալսել և մատչելի էր, որ ինքնին մի պարզ և հասարակ դրամա է։

Աւելի տարօրինակն այն է, որ այդ որոշում կայացնողները հանդիսանում են նրանք, որոնք սիրում են «ատակերտներից չթաղցնել այն բոլորն, ինչ որ կայ, որ գոյութիւն ունի կեանքում»։

Ցաւալի է, երբ մարդիկ տարբեր ժամանակներում, տարբեր սկզբունքներով և հայեացքներով են առաջնորդուում։ Երբ զգալով հանդերձ որ այդ որոշումն անիրաւացի է, այնուամենայնիւ կայացնում են այդպիսի որոշումներ, որոնց հետևանքը միմիայն և միմիայն կարող է լինել դպրոցական դիսցիպլինայի խանգարումն ու օրինազանցութիւնը։

Ցաւալի է, որովհետև մեր սուտն ու անմիջիթար կեանքի միակ սփոփիչ ու լուսատու վայրն աշակերտի համար պէտք է հանդիսանար դպրոցը, սակայն ցաւ ի սիրտ պէտք է ասել որ, այդ առանձնայատկութիւնից զուրկ է նաև դրպրոցը։

Էլ ինչով մթիթարուի աշակերտն, ինչով բաւարարուի աշակերտի ձգտումներն երբ ամեն ինչ որոնք կարող են շատ ու քիչ բաւարարել նրա հոգու պահանջներին ենթակայ են կամայականութիւնների և քմահաճոյքների։

Բաւական չէ պարոններ աշակերտի գլուխը ուռցնել զանազան չոր ու ցամաք ալգեբրական ֆորմուլաներով, աշակերտին հարկաւոր է հոգու և մտքի սնունդ, նրան հարկաւոր է այն բոլորն, ինչ որ մօտ է նրա սրտին։

Եզակի դէպք չէ այս երևոյթը ամբողջ երկար ու ձիգ տարիներ են եղել ուսուցիչների այդ վերաբերմունքը դէպի աշակերտները, սակայն այնուամենայնիւ սիրում ենք յուսալ, որ ի վերջոյ վերջ կը տրուի նման կամայականութիւններին և անտեղի ճնշումներին ու աշակերտին կը յանձնուին իրեն պատկանելիք իրաւունքները։

Ա.Նուռ

ԼՈՒՐԵՐ

✦ Ամերիկեան Միսսիան ուենաւոր գաղթականներին, փոխարինաբար լեռ ստանալու պայմանով, ահագին քանակութեամբ դրամ է բաց թողել։

✦ Վերջերս քաղաքում տիֆը սոսկալի արագութեամբ տարածուած է, և եթէ շուտափոյթ սանիտարական խումբ չը կազմուի տիֆի դէմ սիստեմատիկաբար կուելու համար, շատ հաւանական է խիստ համաճարակի բնոյթ ստանալ։

✦ Գաղթականական հիւանդանոցում ցայսօր կան մօտ 30 հիւանդներ, որից մեծամասնութիւնը բծաւոր տիֆ է։ Հիւանդներն օրեցօր աւելանում են։ Հիւանդանոցում կան նաև տեղացիներ։

✦ Պիրակի ամսոյս 3-ին երեկոյեան Լիլաւայի հոգաբարձութեան նախաձեռնութեամբ, նոյն դպրոցի թատերասրահում, կայացաւ ներկայացում-պարահանդէս։ Խաղացուեց «Գառնիկ Ախպեր» օպերէտը։ Հասարակութեան սակաւութեան պատճառով վերջում պարեր չեղան։

✦ Թեմ. պատգամաւորական ժողովի որոշմամբ, դիմուած է Ն. Մ. Թագաժառանգին ներկայացումներից վերցնելիք տասանորդի վերացման համար։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շնորհաւորական նամակ «Արշալոյս»-ի յարգելի խմբագրութեան

—

Երկտողովս գալիս եմ յայտնելու իմ խորին ուրախութիւնն «Արշալոյս»-ի տպագրուած հրատարակութեան առթիւ, յոյս ունիմ, որ Արշալոյսի շուրջը հաւաքուած մեր պատանի ընկերները, ոչ մի ջանք չեն խնայի իրենց օրգան «Արշալոյս»-ը յարատև դարձնելու։

Այդ առթիւ ես կխնդրէի մեր բոլոր ընկերներին, որ բաժանորդագրուելով, աջակցեն մեր «Արշալոյս»-ի խմբագրութեան։

Ջալալ

1919 թ. 25 Յունուար
Թաւրիզ

«Արշալոյս»-ի յարգելի խմբագրութեան.

—

Ընկերնե՛ր, լսելով որ «Արշալոյս»-ն այսուհետև հրատարակում էք տպագրուած, գալիս եմ երկտողովս շնորհաւորելու և յաջողութիւն մաղթելու։

Ցանկանում եմ, որ Արշալոյս»-ն ունենայ նշանաւոր դիրք և յաղթական պայքար կուսակցական ասպարիզում։

յարգանքներով
Մխիթար Դաւթեան

1919 թ. 25 Յունուար
Թաւրիզ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇՆԱՆ ԳԻՇԵՐ

—

Աշունը հիմա վհատ է ու լուռ,
Պարտէզիս գունատ ծառերը քնած,
Աշխարհն այս գիշեր ինչքան է տխուր,
Իմ հոգում էլ է ամեն ինչ մեռած։

—

Լսւում է հեռուից ճիչն առւակի
Մահուան սարսուռով հեռու մարգերից,
Ու հեծեծանքը մեռնող ջութակի,
Որ այնպէս խորն է հեծկլտում ցաւից։

—

Ու այնպէս մունջ է այդ երդը լալկան,
Այնպէս հոգեթով թախիծ է բուրում,
Ու փայփայում է սրտերը, մարդկան,
Ու ջերմ թախիծով իմ սիրտը յուզում։

—

Աշունը հիմա վհատ է ու լուռ,
Պարտէզիս գունատ ծառերը քնած,
—Սիրտ իմ, այս գիշեր ինչքան է տխուր,
Իմ հոգում էլ է ամեն ինչ մեռած։

Գ. Տեր-Բաղդասարեան

ՓՈԹՈՐԿԻ ՁԱՅՆԻ ՏԱԿ

—

(Արձ. բան.)

Վ. Մագուրկեւիչ

Բարկացած մռնչում է կատաղի ծովը. ափի ժայռերը դողում են մոլեգնած ալիքների զրոհից։ Ալեխառն կոհակները ճայթումով փըշրւում են ժայռերի ոտքերի տակ և ամենամանր չիթերի վերածւում։ Սարսափելի զիշեր է։

Աստուած ազատէ մէկին փորձելու այդպիսի զիշերը ծովի վրայ... Այդ պատճառով ինչքան դուրեկան է X Պատօրի տանը։ Ճրագով լուսաւորուած սեղանին նստած են ինքը-պատօրը, նրա պառաւը-կինը և աղջիկը, իսկ սրա կողքին դեղեցիկ երիտասարդ նաւավարը, նրա փեսացուն։ Ինչպիսի հանդիստ, խաղաղութիւն է նրանց շրջապատում։ Մոլեգնած փոթորկի մռնչիւնը չի անհանդստացնում նրանց. քամու սուլումն էլ նրանց համար չէ։ Նոքա երջանիկ են... բայց ահա յանկարծ փոթորկի մռնչիւնի միջից լսւում է հրազէնի ձայն, ապա երկրորդը. համարեա նոյն ժամին հնչում է կոչնակ զանգակի չարագուշակ ձայնը—նաւավարնե՛ր, ոնի դորձ. նաւը ոչնչանում է։ Դեռ նաւավարը հրաժեշտ չտուած հարսնացուին՝ ձգեց նրան դունատ ու դողահար և շտապեց դէպ ափը։ Բոլոր նաւավարներն արդէն հաւաքուած էին. նստում են նաւակը։ Թիակների մի քանի ուժեղ շարժումներ և նաւակն անյայտանում է բարձրացող ալիքների յետեն ու կորչում խաւարում։ Ինչքա՜ն ջերմ ողջոյներ են բարձրանում դէպ երկինք դնացողների համար... իսկ փոթորիկն աւելի կատաղում ու կատաղում է։ Կոհակները բարձրանում են աւելի ու աւելի բարձր, փրփուրը ցայտում է մինչև ժայռերի կատարները։

Ափում կանգնելու ոչ մի հնարաւորութիւն չկայ. բոլորը գնում են տուն, միայն պատօրի աղջիկն էր մենակ կանգնած ժայռի վրայ և աչքերը յառած մռայլ հեռուն՝ սարսափով սպասում է պաշտածի վերադարձին...

Փոթորիկը խաղաղուեց։ Դեռ բոլորովին չհանդարտուած ալիքները տրտունջով տարածւում են ժայռերի ստորոտներում։ Երկնքով տարուող ցրիւ ամպերի միջից փայլեց լուսնի դունատ, դողդողջիւն շողը։ Ափին թափուած են նաւակի փշրանքները... ծովային ալեկոծութիւնը ծանր ճօճումով բերում է դէպ ափ թիակների տախտակները և կըտրատուած պարանները։ Աւազի վրայ պառկած է երիտասարդ նաւավարի դիակը և լուսինը հանդարտութեամբ համբուրում է պատօրի աղջկայ՝ վշտահար, փեսացուի դիակի վրայ խոնարհուած դլուխը...

Թարգմ. Ա-ա-ր

ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Թաւիզ «Պայքար»-ին.— Թէկուզ դուք լինիք «Զանգ»-ի պէս լուրջ շաբաթաթերթի ծրնունդ, սակայն ձեր «գոհար յարձակումները» մեր խմբագրական կազմին և «Արշալոյս»-ին կը մնան անպատասխան։

Ցանկանում ենք նիւթական աւելի բարելաջող պայմաններ թերթը կանոնաւոր հրատարակելու և մի քանի կրթուած ու զարգացած անհատներ, (առանց չակերտների է հարկէ), թշնամին ու հակառակորդն իրարից զանազանող, ցնելու Ձեր թերթի էջերը։

Թաւիզ Բ. Տ. Յ.-ին.— Ձեր բանաստեղծութիւնը չընդունուեց. մի յուսահատուէք այլ աշխատեցէք։

Խմբագրական մարմին